

**ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱԼՈՐՈՒԹԵԱՆ  
ՀԻՒՍԽԱՑԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՀԱՏ  
ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ԵՒ ՑՈՒՆԱ-ՀՌՈՍԻԱԿԱՆ  
ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ Ք.Ա. 190-Ք.Ե. 428 ԹԹ.  
(ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ)**

ՑԱԿՈՐ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մեծ Հայքի պետականութեան պատմութեան ուսումնասիրութեան խնդրում առանձնապէս կարեւոր նշանակութիւն ունի սահմանային ինդիբների վերլուծութիւնը: Սահմանն հանդիսանում է այն կարեւոր չափորոշիչներից մէկը, որի ներսում ձեւաւորում եւ իր կենսակերպն ու պատմութիւնն, իսկ ապագայում նաև պետականութիւնն է կերտում ժողովուրդներից խրաբանչուրը: Այս տեսանկիւնից խիստ կարեւոր է պարզաբնել եւ ցոյց տալ, թէ ինչպիսի պետական սահմանների առկայութեան պայմաններում է իր գոյութիւնն ու կենսակերպն ապահովել հայ ժողովուրդն իր պատմութեան երկարատեւ գարերի ընթացքում:

Քանի որ խօսքը վերաբերում է Մեծ Հայքի թագաւորութեանը, ապա այն անմիջականօրէն առնչուում է Արտաշէս Ա-ի անուան եւ գործունէութեան հետ, քանզի հայ բազմաթիւ արքաններից նա առաջինն էր, որ կարողացաւ մէկ պետականութեան սահմաններում վերամիաւորել հին Հայկական 15 նահանգներից՝ 14ը Ռոփից բացի, որն ընդգրկուեց այդ պետականութեան տարածքների մէջ մի փոքր աւելի ուշ՝ Ք.ա. 94ին, Տիգրան Բ. Մեծի կողմից: Մերօրեայ անշախ պետականութեան՝ Հայաստանի Հանրապետութեան համար առանձնապէս կարեւոր եւ այժմէական է ոչ միայն սահմանային տարակարծութիւնների խողըի կարգաւորումը արեւելիս եւ արեւմտեան հարեւանների՝ Աղբրէջանի եւ Թուրքիայի հանրապետութիւնների, այլև հիւսիսուող գտնուող Վրաստանի Հանրապետութեան հետ: Այսպիսի բրաւանդակութեան յօդուածի շարադրումն ունի իր որոշակի շարժառիթներն, քանի որ ներկայիս (չնայած այլպէս էր նաև նախկինում) խորհրդային իշխանութեան տարիններին) վրացական պատմագիտութիւնն համարեան առանց բացառութեան ունի սուր հակահայկական ուղղուածութիւն: Նրանց կողմից անհիմն տարածքային յաւակնութիւններ են ներկայացում հայերին, որն ի վերջոյ կանխարգելման եւ հակառակն ապացուցելու կարիք է զգում:

Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսային, իսկ մասնաւորաբար հայ-վրացական սահմանային հարցերին անդրդարձել են Հայնրիխ Հիւրշմանը, Եղոքէֆ Մարկուարտը, Հայր Դուկաս Խնճինեանը, Հայր Դեւոնդ Ավիշանը, Նիկոլայոս Աղոնցը, Ցակոր Մանանդեանը, Առոքէն Տ. Երեմեանը, Թագէս Ցակորեանը, Ռոպըրթ Հ. Հիւսնը եւ այլօք: Այսպիսի մեծանուն ուսումնասիրողների անունների թուարկումն ունի մէկ հիմնական նպատակ,

որպէսզի ցոյց տրուի, որ հարցի ուսումնասիրութիւնը չի գտնուում մեռեալ կէտի վրայ, այլ արդէն կատարուել է բաւականին կարեւոր եւ հիմնարար աշխատանք վրաց պատմաբանների հակագիտական եւ ենթակայական վարկածները ժխտելու համար։ Հարցի մեխսն այն է, որ ոչ միայն հայ, այլեւ օտարալեզու, այդ թւում եւ վրաց մատենագիրներն բաւականին առարկայական եւ անաշառ վկայութիւններ են հաղորդում հայ-վրացական սահմանի վերաբերեալ, որոնք օգտագործելուց յիտոյ նոյն այդ վրացի ուսումնասիրողներն մոռանալով իրենց նախկին կարծիքը՝ խօսում են սահմանների վերածելման ու տարածքային պահանջների մասին։ Ուստի յօդուածում առաւել նպատակայարմար ենք գտնում անդրադառնալ ոչ միայն որոշակի հայ-վրացական, այլեւ Մեծ Հայքի Թագաւորութեան ողջ հիւսիսային սահմաններին, սկսած հիւսիս-արեւելքից մինչեւ հիւսիս-արեւմուտք։

Բ. դարի սկզբներին (Արտաշէս Ա-ի օրօք՝ Ք.ա. 189-160) ետիդի ունեցած հայ-վրացական պատերազմի աւարտից յիտոյ, որի մասին վկայում են մատենագիրները<sup>2</sup>, այլևս սահմանային արմատական փոփոխութիւններ Մեծ Հայքի հիւսիսում՝ Հայաստանի եւ հարեւան Վիրքի եւ Աղուանքի միջեւ համարեա տեղի չունեցան։ Ենթալիք այս հանգամանքից համառօտակի կանգ առնենք այն հարցին, թէ ինչպիսի տեսք ունէր այդ սահմանագիծը։ Մեծ Հայքի ծայր արեւելքում Փայտակարան նահանգն էր, որը գտնուում էր արեւելքան լայնութեան 38-40°ի միջին ընկած տարածքում եւ յարում էր Կասպից Մովի արեւմտեան ափերին։ Եթէ աւելի որոշակի հացացնենք այս տեղադրութիւնը, ապա այդ նահանգը ճգնում էր Կուրի գետաբերանից՝ ՀրաքուՊերոտ գաւառից մինչեւ Որմիզդ-Պերոտ, որոնց միջին տեղակայուած էին հիւսիսից-հարաւ Ռոտի-Բաղա, Հանի եւ Աթչի Բագաւան գաւառները։ Այստեղ վիճելի է միայն Հանի գաւառի խնդիրը, որի եղելութիւնն ընդունում է Երեմեանը, բայց լիովին բացառում է Ցակորեանը ինչ վերաբերում է Բարկէն Յ. Յարութիւնեանին, ապա վերջինս հարցականի տակ է դնում նրա լինելիութիւնը<sup>3</sup>։ Այս տեղանուան մասին երկիցս լիշտակալում է Մովսէս Խորենացին, որոնցից առաջինում նա նշում է, որ այստեղից էր ծննդով հայ պատմութեան նշանաւոր երեւելիններից մէկը։ Ողիւմպ քուրմը, որը գրել է Մեծենական Պատմութիւն աշխատութիւնը<sup>4</sup>։ Առաւել կասկածելի է երկրորդ վկայութիւնը։ Նա նշում է, որ հայ երեք նախարարներ՝ Սուրէն Խոռոխոռունին, Վահան Առաւելեանը եւ Աշխաղար Դիմաքսեանը, ցանկացել են խել Արշակ Գ. արքայից՝ Դարանազեաց գաւառի։ Անի ամրոցում թաքրած գանձերը։ Նրանց նպատակն է հանդիսացել այդ զանձերն յանձնել Արեւելահայաստանում իշխող՝ սասանեանների զրածոյ Խոսրով Գ.ին, բայց այդ մտայլացումը մատնուել է անյաջողութեան։ Այստեղ մեզ հետաքրքրողը ոչ թէ գանձերի ճակատագիրն է, այլ խնդրի լուսաբանումը՝ պատմա-աշխարհագրական տեսանկիւնից։ Միանգամայն պարզ է եւ առաւել եւս հասկանալի, որ ոչինչ ընդհանուր չէր կարող լինել եւ, որ խօսքը վերաբերում է Մեծ Հայքի երկու հակագիր բեւեռներում գտնուող աշխարհագրական տեղանուններին։ Դարանազեաց Անիի ամրոցի մասին երկու վկայութիւններ ունի նաև Բուգանդը եւ վերջինս այն տեղագրում է Դարանազիի՝

Եկեղեցաց գաւառում, որը Բարձր Հայք նահանգի կազմում էր<sup>6</sup>: Հայ երկու հանրայայտ պատմիչների ար վկայութիւնների համադրութիւնից պէտք է եղակացնել, որ, եթէ Խորենացու մօտ կայ սխալ կամ անշտութիւն, ապա դրա մեղաւորը ոչ թէ ինքն է, այլ դա յետազարւմ նրա Պատմութիւն Հայոցի ձեռագիրն արտագրողների միայի եւ անփութութեան արդինքն է: Վերեւում մենք միտումնաւոր չնշեցինք եւ շրջանցեցինք նշանաւոր հետազօտող Գագիկ Խ. Սարգսեանի անունը, որը եւս զրազուել է այս Հարցով, յատկապէս պատմա-անուանակոչութեան տեսանկիւնից<sup>7</sup>, քննութեան ենթարկելով Ողիմսպ անունը՝ Նա գտնում է, որ այն յունական Օլոպրօ-Ընկույտի<sup>8</sup> հայկականացուած տարատեսակն է եւ, որ նրա Մեծենական Պատմութիւնը պէտք է գրուէր հելենիզմի ազդեցութիւնը մեծապէս կրած Դարանացեաց Անիի<sup>9</sup>. Արամազդին պատկանող տաճարում: Մենք լուսին կիսում ենք ար տեսալէտը և կարծում, որ Հանին նոյն Դարանացեաց Անին է: Պէտք է աւելացնեն նաև, որ հայերէնում իրար բաւականին մօտ են ար-եւ-ելք եւ ար-եւ-մուտք բառերը (առաջին երկու վանկերն իրարից բնաւ չեն տարրերուում), ուստի եւ, չպէտք է բացառել ձեռագիրն արտագրողների կողմից զուտ պատահական, եւ ոչ թէ միտումնաւոր շփոթմունքը այս խոնդրում: Այսպիսով, Սարգսեանը յարում է Յակոբեանի տեսակէտին, որին կողմնակից ենք նաև մենք:

Կրկին վերադառնանք Հանիին: Ըստ Երեմեանի, Յակոբեանի եւ Յարութիւննեանի<sup>10</sup> Փայտակարան նահանգի կազմում գոյութիւն ունեցած գաւառների թուաքանակը եղել է տասներկու: Փայտակարանի կապակցութեամբ Երեմեանը գրում է. «Մեծ Հայքի այս ծայրամասային Երկիրը, որ նուաճուել է Արտաշէս Ա.ի ժամանակի, համարում էր Փայտակարան բաղադր բաղադրային տերիստորիան»<sup>11</sup>: Փայտակարան նահանգի հրամանարեւելքում սահմանագիծ է հանդիսացել Կուրու, որն իրարից անջատել է Մեծ Հայքն ու Աղուանից թագաւորութիւնը: Այստեղ է գտնուել Աշխարհացոյցեան Ռւտիք նահանգը, իսկ Արտաշէս Ա.ի օրօք նրա ողջ արեւմտեան Հատուածը յարունի է եղել Շակաշէնէ անուամբ: Վերջինին կապակցութեամբ Սորարոնն ունի երեք լիացակութիւններ, որոնցից հարցի մեզ հետաքրքրող տեսանկիւնից առանձնապէս անդնեանատելի է վերջինը: Նա վկայում է. «Հայաստանի ներսում կան շատ լեռներ եւ շատ լեռնադաշտեր, որոնց մէջ խաղողի այգին հեշտորեանք լի աճում, նաև շատ հովիտներ, ոնանք չափուոր, ոնանք եւ շատ բերքի ինչպէս Արաբսենէի դաշտը, որով Արաք գետն է հոսում մինչեւ Աղուանիք ծայրը, եւ քափում է Կասպից ծովը, եւ սրա հետ Ծակաշէնը՝ սահմանակից Աղուանիին եւ Կուր գետին, յետոյ Գովարքը»<sup>12</sup>: Շակաշէնն անջատուել է միայն աւելի ուշ, վերածուելով գաւառի ու լինելով թուով եօթերորդը եւ գտնուելով Ռւտի Առանձնակ եւ Գարդման գաւառների միջեւ: Սորարոննեան դարաշրջանում այն ընդգրկել է ոչ միայն այսպէս կոչուած Աշխարհացոյցեան Շակաշէնը, այլև Գարդմանը եւ նրանից արեւմուտք ընկած Տուչ Կատակ եւ Աղուէ գաւառները, մինչեւ՝ Գուգարքի արեւելեան սահմանները<sup>13</sup>: Փաստօրէն Կուրը արգելապատնչէ հանդիսացել եւ նպաստել, որպէսպի Երուանդունի թագաւորների գա-

Հակալութեան ժամանակներից սկսած, ոչ մի հակառակորդ չկարողանայ ներխուժել եւ ներթափանցել Մեծ Հայքի տարածքը, իսկ առաւել եւս հաստատել այստեղ իր գերիշխանութիւնն ու տիրապետութիւնը:

Վերոյիշեալ տարածքներից արեւելուտք Գուգարք երկրամասն է, որը, ինչպէս տեսանք վերեւում, նախապէս եղել էր Հայոց պետականութեան կազմում, իսկ յետագայում, Երուանդունիների օրոք, անյայտ Հանգամանքների բերումով, բայց շատ կարճատեև ժամանակով՝ ընկել էր Հարեւան Վիրքի տիրապետութեան տակ: Դեռ ուրարտական ժամանակաշրջանից այս վարչա-տարածքային միաւորը յայտնի է եղել Զարախսա անուամբ (<sup>KUR</sup> Zabaha), այսինքն՝ գտնուել է Հայոց պետականութեան կազմում դեռ ուրարտական շրջանից, իսկ յետագայում, այն վերստացել է Զաւախք անուանում՝ գտնուելով Գուգարքի կազմում: Ինչպէս մատնացոյց է անում Ն. Վ. Ցարութիւնեանը, այն միացուել է Ուրարտուի Հայոց պետականութեանը դեռ Արդիշտի Ա-ի օրոք եւ գտնուելիս է եղել, բնականաբար էթիունի (<sup>KUR</sup> Etiuni-Etiuh) վարչա-տարածքային միաւորից հիւսիս<sup>11</sup>: Ինչ վերաբերում է էթիունի վարչա-տարածքային միաւորին, ապա այն հիւսիսում սահմանակից էր Զարախսա երկրին, իսկ հարաւում՝ Ազախն: Արեւելքում այն տարածում էր մինչեւ Սեւեանի արեւմտեան ափը, իսկ արեւելուտքում՝ Ախուրիանիի տարածքը (<sup>URU</sup> Ahurian):<sup>12</sup> Էթիունից արեւելուտք տարածում էր Դիառուսի երկիրը (Տայքը), իսկ Հարաւ-արեւմուտքում՝ Տաւարածների հովիտն էր: Էթիունին, փաստորէն Ազա երկրի հետ միասին ընդգրկում էր Աշխարհացոյցինան Այրարատի հիւսիսային կէսը, որն էլ յետագայում դարձաւ բնօրրան հայ ժողովրդի ողջ պատմութեան ընթացքում<sup>13</sup>: Երեմեանն իր երկու, բայց տարբեր ժամանակներում հրատարակած նոյնանուն քարտէներում Մեծ Հայքը Հստ «Աշխարհացոյց»-ի եւ Հայաստանը Հստ «Աշխարհացոյց»-ի, Գուգարք նահանգին տալիս է երկու տարբեր սահմաններ՝: Առաջին քարտէնում, Գուգարքն Ուտիքից անջատուած է Գարդման եւ Մեծ Կուենք գաւառներով, որոնք Ուտիքի կազմում են, իսկ Գուգարքի կազմում ընդգրկուած են Բողնոփոր, Քուիշափոր, Չորոփոր, Մորփոր գաւառները: Երեմեանը սահմանագիծ է անցկացնում նաև Գուգարքի կազմում ընդգրկուած Բողնոփոր, Քուիշափոր, Խանցիխէ, Պարուա եւ Մանգեաց Փոր գաւառների եւ մասցեալ տարածքների միջեւ, որոնք գտնուելով Գուգարքի կազմում, ըստ նրա 338-363ին անջատուած են եղել Մեծ Հայքից: Հեղինակը նկատի է ունեցել այն հանգամանքը, որ երբ 360ականների վերջերից՝ Արշակ Բ-ի եւ Պապի գաւակալութիւնների միջեւ ընկած ժամանակահատուածում, երկրի տարբեր մասերում բռնկւում էին ապստամբութիւններ, Գուգարքը նոյնպէս ժամանակաւորապէս անջատուել է Մեծ Հայքից Բայց, ինչպէս վկայում է Փաւատոսը, գրանք «Արմատախիթ» արուեցին սպարապետ Մուշեղ Մամիկոնեանի կողմից՝ Պապի իշխանութեան հենց ամենասկզբին (368-370): Այդ խոռովութիւններն ընդգրկել էին Հայաստանի համարեա բոլոր ծայրամասերը եւ հիւսիսում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ Փաւատոսը վկայում է: «Ցարագս Վրաց գլխում, ուր նշում է, որ միւսների նման պատժուել է նաև Գու-

գարաց բգեշխը, եւ իր շարադրանքն աւարտում է այսպէս. «Եւ զիհն սահմանն, որ յառաջոն էր ինալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինըն մեծ գետն Կոր, այնու հետեւ յինըն վտարեալ՝ դառնայր անտի»<sup>15</sup>: Իր երկրորդ քարտէզում Երեմեանը, Մանզլեաց Փոր, Պարուար, Բողնոփոր, Քուշափոր գաւառներն առանձնացնելով անուանում է «Գուգարաց բղեշխութեան կազմու մտնող տարածքը մինչեւ 363թ.»<sup>16</sup>:

Մեծ Հայքի սահմանը Կուրով աւարտում էր Հնարակերտի մօտ, որն յայտնի էր որպէս ոչ միայն քաղաք-ամրոց, այեւ որպէս ճանապարհների խաչմերուկ, քանզի այստեղով է անցել Պարտաւ-Մծինեթա-Սերաստուպղիս (Փասիս) ճանապարհը, որը տանում է մինչեւ Ալանանց Դուռն ընկած ուղին: Հնարակերտի մասին երկիցս յիշատակուած է Բագրատունեաց Հայաստանի ժամանակին վերաբերող աղբիւրներում, որպէս կարեւոր նշանակութիւն ունեցող առեւտրական հանգոյցի: Այն գտնուել է ինչպէս Պարտաւ-Մծինեթա, այնպէս էլ Դուրին-Մծինեթա ճանապարհների վրայ, որը կրկին անդամ վկայում է նրա կարեւոր դիրքի մասին<sup>17</sup>: Այն գտնուել է Աղուէ եւ Զորոփոր գաւառների միջև, որի հիւսիսում հայ-աղուանական սահմանն էր, եւ փաստորէն ունէր կարեւոր ու ազժավարական նշանակութիւն: Ներկայումս այդ տեղանքն համընկնում է Գուգարաց լեռների հիւսիսային ծայրակէտի հետ, որն ալիքաձեւ ձգւում է հիւսիսից-Հարաւ՝ համարեա գուգահեռ Դերէդին:

Այժմ կանգ առնենք Հնարակերտի հիմնախնդրին: Երեմեանը վերջինիս կապակցութեամբ գրում է. «Լոյզուել է նաեւ Խանցիխէ, որ չի աւանդուած: Խանցիխէ առաջացել է Խան գետի անոնից, որ պահպանել է Ստրաբոնը՝ Խանց, հաւանաքար յետազայ Ծջիա (Խորամ), որի գետաբնանի մօտ այժմնան Նզլարի եւ «Լոտորած կամրջի» մօտ՝ գտնում էր յիշեալ ամրոցը: Հնարակերտը գտնում էր Մսն Հայքի, Վիրքի և Աղուանիի սահմանների հատման կտորում»<sup>18</sup>: Սակայն Էշոնարի Մրովելին իր մի վկայութեան մէջ զրանք, այսինքն՝ Հնարակերտն ու Խունանը ներկայացնում է որպէս բորբոքվին տարբեր բնակավայրեր: Նա գրում է. «Եւ Սիրիանը (Սիրիանը) տուեց (իր ազգական) Պերողին իր դոստոն ի կոնութեան: Նաեւ շնորհեց երկիրը Խունանից սկսած մինչեւ Պարտաւ (Բարդաւ), Կորի երկու կողմը՝ իշխան նշանակելով նրան այնուել եւ զօրք բնելով պարսից երկիրից սկսեց կոտել Տրդատի դէմ»<sup>19</sup>: Հեղինակի խօսքն այստեղ Տրդատ Ա-ի օրօք կատարուած դէպքերի մասին է, որտեղ նենապափոխուած են իրադարձութիւնները Վիրքում այդ ժամանակ իշխում էր Փարասաման Ա-ի որդին՝ Միհրզատ Բ-ը (Ազորկը կամ Արզամէլլ, 60-75ին), խոկ զաշնակից Պարթեաւստանում Վաղարշ, որը այս վկայութեան մէջ անոււանուած է Պերող: Կանգ չառնելով այս վկայութեան հաւաստիութեան վրայ, փորձենք այն լուսաբանել պատմա-աշխարհագրական տեսանկիւնից: Պատմիչը այստեղ շեշտում է երկու հանգամանք. ա՝ Խունանից մինչեւ Պարտաւ ընկած տարածքը, թ՝ Կուրի երկու կողմերում իշխնելու հանգամանքը: Նա փաստորէն նշում է տրուած տարածքի հիւսիսային եւ հարաւային ծայրակէտերը, որոնցից առաջինը համապատասխանում է Խունանին,

իսկ երկրորդը՝ Պարտաւին։ Կուրի հիւսիսային կողմը եղել եւ մնում է նրա ձախակողմեան ափից ինչ վերաբերում է Հնարակերտին, ապա այն մշտապէս գտնուել է նրա աջ ափին՝ Մեծ Հայքի տարածքում։ Փաստօրէն պէտք է եղրակացնել, որ Խունանը եղել է Մեծ Հայքից դուրս, Կուրի ձախ ափին, Վիրքի տարածքում։ Այս տեսակէտն իր իրաւացի արտացոլումն է գտել Վրաստանի Պատմութիւն բազմահատորեակի երկրորդ հատորում, բայց վերջինիս Հեղինակները ընկել են ծայրայեղութեան մէջ՝ «սեփականացնելով» մի շարք Հայկական տարածքներ։ Հեղինակը, նշելով որ, Հարեւան Հայաստանը բաժանուած է եղել տարածքիների, այնուհետեւ եղրակացնում է, որ նոյնպիսի բաժանումներ պէտք է ունենար նաեւ Վիրքը, երբ այստեղ կառավարում էր Փառնաւազը<sup>20</sup>։ Դրանք Վիրքում եղել են թուով թը եւ կոչուել են խեւի, որը նշանակում է կիրճ։ Ոչինչ չունենալով այս կարծիքի դէմ, մենք Հարկադրուած ենք առարկել այն մտքին, թէ Հարաւում մինչեւ ուր են հասել Վիրքի սահմանները։ Ճեղինակը երրորդ խեւի կազմում, որը կոչուել է Գարդարանի, ընդգրկում է Դերէդից մինչեւ Տփդիս ընկած տարածքները, որի կենտրոնն է Հանդիսացել Խունանը<sup>21</sup>։ Այս խնդրին մենք նպատակ չունենք անդրադառնալ կրկին, քանզի վերևում նշեցինք, որ Հայ-վրացական սահմանն արդ հատուածում անցնում էր Վիրահայոց լինեներով եւ Արգեսով, ուստի եւ ամէն ինչ պարզ է եւ հասկանալի։ Փաստօրէն Գարդարանի խեւի կենտրոն Խունանը պէտք է փնտուել Վիրքի տարածքում, Ալգեսից եւ Վիրահայոց լեռներից հիւսիս եւ այն ոչ մի կապ չի ունեցել Հնարակերտի հետ։ Ինչ վերաբերում է Երեւեանին, ապա նրան միանշանակօրէն չփոթութեան մէջ է գցել Մըովելու վկայութեան այսպիսի ծայրայեղ Հակասականութիւնը։

Քանի որ մենք խօսեցինք Հայաստանի հիւսիսային հարեւանի կողմից արդէն այն ժամանակ Մեծ Հայքի Հանդէպ տածած տարածքային յաւակնութիւնների մասին, որը առկայ է նաեւ մեր օրերում, ապա նշենք, թէ ուրիշ ինչ բուն Հայկական տարածքներ են մատնաշւում, որոնք իրր վրացական են։ Ըստ Գէորգի Ա. Մելիքիշվիլու, չորրորդ խեւին ընդգրկել է Տաշիրը եւ Արոցը (Հայկ. Աշոցքը), Հինգերորդը՝ Զաւախեթին (Զաւախը) եւ Արտաւանը, իսկ եօթերորդի մէջ են ընդգրկում Կլարչէթը կամ Կղարջը<sup>22</sup>։

Հայ-վրացական սահմանի՝ Կուրով անցնելու մասին, Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիս-արեւելեան սահմանագիսին, ուշագրաւ մի վկայութիւն ունի նաեւ Խորենացին։ Նա գրում է. «Յետ սորա մեծ եւ անուանի եւ բազմարիտ զարեւելից հիւսիսոց կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ զետովն, որ հասանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայր զիտեա, զի զցենս զայն մեծ եւ անուանի մոռացումն եղեւ մեզ յառաջումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զրաշտն Ալուանից եւ զեւնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասիսայ, մինչեւ ցամուն, որ ասի Հնարակերտ...»<sup>23</sup>։ Միայն Հնարակերտից յետոյ է, որ դէպի արեւմուտք ընկած սահմանն այլևս չի անցել Կուրով եւ Հմանականում համապատասխանել է տեղանքի լեռնագրութեանը՝ Խորենացու

այս վկայութիւնը տեղիք է տալիս նաև այլ ենթագրութիւնների, որոնց կողքով աննկատ անցնելն անհնարին է: Խնդիրը վերաբերում է ոչ միայն Մեծ Հայքի պետական սահմանին՝ այս տարածաշրջանում, այլև նրա ներքին քարչա-տարածքային բաժանումների բնագաւառում կատարուած փոփոխութիւններին: Խորենացու վկայութիւնը ուշագրաւ է այն առումով, որ Միսակը որոշ ժամանակ ղեկավարել է նաև Սիւնիքից դուրս գտնուած տարածքներում, եւ նրա ենթակայութեան ներքոյ է եղել Ազուանից դաշտը, այսինքն՝ Կուրի աջակողմեան ափը: Այս զաշտը տարածուել է Ուտիք եւ Փայտակարան նահանգների տարածքում: Բնականաբար, պարզ է, որ խօսք չի կարող լինել Փայտակարանի եւ Ուտիքի Սիւնիքի կազմում գտնուելու վերաբերեալ: Խորենացու վկայութիւնը Առանի վերաբերեալ ամբողջացնում է Մովսէս Կաղանկատուացին, երբ ներկայացնում է նրա տոհմածառը:<sup>25</sup> Սիւնիքի մասին լիշտառակում է նաև Սորաբոնը: Չնայած՝ նրա վկայութիւնը ինչ որ տեղ հեղձեղուկ է՝ այդ նահանգի սահմանային ինդիրները վերլուծելու տեսանկիւնից, բայց Սորաբոնը գոնէ յատակօրէն գծագրում է այս նահանգի հիմքին-արևելքան եւ հարաւային սահմանները, նշելով թէ ո՞ր քարչա-տարածքային շրջաններով է այն եղել շրջապատուած: Սորաբոնը վկայում է. «Հայաստանի զաւաններից նն նաև Փաւմննեն եւ Օրփիսնենէն, որ հայրայրում է մնծաբանակ պատերազմական ճի»,<sup>26</sup> որոնց էլ սահմանակից էր Սիւնիքը:

Այսպիսով, ստացում է, որ Խորենացու վկայութիւնը Սիւնիքի կապակցութեամբ, վերաբերում է ոչ թէ նրա կազմում գտնուած տարածքների հարցին, այլ ունի ինչ-որ այլ իմաստ: Հաւանաբար, Սիւնիքի կառավարիչները այդ ժամանակ եղել են հայոց ողջ արեւելքան կողմի տեղապահները, միաժամանակ լինելով նաև այդ կողմի ողջ զինական ուժերի հրամանատարը: Աւելի ուշ գարաշրջանի բառապաշարով ասելու դէպֆում նրանք փաստօրէն ունեցել են բգեշխի պաշտօնը: Այլ բացատրութիւն Խորենացու այդ վկայութեանը, երեւի անհնարին է տալ:

Ինչո՞ւ է պայմանաւորուած մեր կողմից այս տարածքի նմանօրինակ մանրազնին քննութիւնը՝ Քարտէզներում տարբեր արտացոլումներ է ստացել Գուգարքի այս հատուածում գոյութիւն ունեցած Հայ-վրացական սահմանագիծը: Դա պատճառ է հանդիսացել, որ Գուգարքի տարածքում գաւառների թուաքանակի վերաբերեալ ուսումնասիրուղները յայտնեն իրարամերժ կարծիքներ: Երեմեանն իր ուսումնասիրութեան հիմք համարելով հանգերձ Աշխարհացոյցը, սկզբում գտնում է, որ եղել է 16, իսկ ապա՝ 15, իսկ 8 տարբերանն ու Բ. Յարութիւնեանը՝ 9ը, այսինքն՝ այնքան, որքան նշուած է նոյն պատմական փաստաթղթում: Կացութեան այսպիսի տարբերութիւնների պատճառ է ոչ միայն տարբեր ձեռագրերից օգտուելը, այլև 9ը՝ դա աւատատիրութեան սկզբնական շրջանում տիրող վարչատարածքային բաժանումների արտացոլումն էր, իսկ 16ը կամ 15ը՝ նոյն դարաշրջանի զարգացած հանգրանչ արտայայտութիւնը<sup>27</sup>:

Այս բացատրութիւնից անցում կատարենք Գուգարքի սահմանային հիմնահարցին: Կուրով է անցել նաև Հայ-վրացական սահմանը Գուգարքի

Ժայր-արեւելքում, որտեղ տեղակայուած են եղել երկու գաւառներ՝ Զորո-փորը եւ Կողբոփորը: Կողբոփորի մօտ Կուրը կտրուկ շրջադարձ է կատարում հիւսիս, որի պատճառով էլ Հայ-վրացական սահմանագիծն արդէն անցնում էր Ալգետով, իսկ այնուհետեւ՝ Թռեղքի կամ Թրիալեթի լիոներով: Համաձայն Ծրեմեանի Թրիլիսին գտնուել է երկու երկրների սահմանի մօտ, Հայկական Պարուար գաւառի հարեւանութեամբ: Այստեղով ձգւում են Թռեղքի կամ Հայկական լեռները, որոնք սկիզբ են առնում Ալգետից մի փոքր հիւսիս գտնուող Կումիսի լճից եւ փոքր աղեղնաձեւութեամբ ձգւում արեւելքից-արեւմուտք՝ 42°ի զուգահեռականին համընթաց՝ գտնուելով զուգահեռականից Հարաւ: Հատերով 44°ի միջօրէ կականը այս լեռները հասնում են մինչեւ Կուր, որը համապատասխանում է Ներկայիս Ախալցիխէ քաղաքի տեղանքին: Այն արեւելքից փակում է Փարվանա լիճ տանող ճանապարհը, իսկ արեւմուտքից նոյն ուղղուածութեամբ ձգւում են Սամարի լեռները, որոնք ծայր հիւսիսում միանում են Զաւախքին՝ ներկայիս Մալկայի ջրամբարի հարեւանութեամբ: Այս տարածքի լեռնազրութեան մասին վկայում է նաև Պինիսոս Աւագը, զբերով. «Թասիէի (Thasie) և Թրիարիէի (Thriarie) տարածքներն հասնում են մինչև Պարիսալեսան լեռները, որից այն կողմ է գտնում Կողբիսի անապատը...»<sup>28</sup>: Պարզ է, որ վերջինս Արեւելեան Պոնտոսի արեւելեան մասն հանդիսացող Պարիսարեան լեռներն են, որոնք ձգւում են Լազիստանի լեռներին համարեա զուգահեռ՝ սկսած Ճորոխի միջին հոսանքի շրջանից մինչեւ նրա գետաբերանը, որը գտնուում է Բաթումի քաղաքի մօտ: Այստեղ վերոյիշեալ անտիկ մատենագրի միակ «թերացումն» այն է, որ նա շրջանցում է Թռեղքի եւ Պարիսարեան լեռների միջին՝ Հարաւ-արեւմուտքից դէպի հիւսիս-արեւելք տարածուող կղարջքի լեռները, բայց շարունակութիւնում խօսում է նաև Մոսքական եւ ներկայիս Աճարա-իմերեթական լեռների վերաբերեալ<sup>29</sup>:

Փաստօրէն, ինչպէս տեսնում ենք վերոյիշեալ վերլուծութիւնից, Մանգեաց Փորից սահմանը ձգուել է դէպի Թռեղք գաւառը, ուր բարձրացել է մի փոքր հիւսիս, հասել Ֆելիցիիս ամրոցի շրջանը, որը եղել է Վիրքի կադուում: Սահմանն այստեղ ձգուել է Թռեղքի լեռներին համարեա զուգահեռ եւ հասել Քցիա գետի ակունքները ու Տարածդուրի լիճը: Այստեղից սահման է դարձել Գուգարքի բարձրաւանդակի արեւելեան հատուածը, որտեղ էլ հենց Կուրն առաջին անգամ հատում է Մեծ Հայքի սահմանը եւ անցնում Վիրքի տարածքը: Հայ-վրացական սահմանագլխի այս հատուածում կուրին է միանում նաև նրա վտակներից Փարաւանան, որն հօսում է մինչ այդ ներկայիս Ախալքալաքի քաղաքի հարեւանութեամբ: Նոյն տեղում արեւմուտքից հորիզոնական ուղղուածութեամբ Գուգարքին են խաչաձեւում Ուգարիի լեռները, որոնք այս հատուածում իրարից տարանջատում են Մեծ Հայքն ու Արեւմտա-վրացական պետութիւնը՝ կամ Կողբիսը, որը նաև նոյն Կողմիդան է: Այս լեռների արեւելեան վերջին հատուածն ամբողջովին գտնուում է արդէն Մեծ Հայքի տարածքում: Ուգարիի լեռներն արեւմուտքում հատում են ուղղահայեաց դիրք ունեցող Արսիանի լեռներին, որոնք սկիզբ առնելով Աջարիս-Մղալիի ակունքներից, հասնում են մինչեւ Կուրի

ակունքները՝ ունենալով այլիքաձեւ ձգուածութիւն։ Արսիանի եւ Ռւլզարի հատման տեղում է գտնում 3185մ. բարձրութիւն ունեցող Արսիան լեռը։ Այս անունը չպէտք է շփոթել Տայքի Արսեաց Փոր գաւառի հետ, այն առումով, որ գաւառն այդ անուանումը չի ստացել այդ լեռների անունից։ Արսիանի լեռնագագաթից սահմանն անցել է Շաչէթի լեռներով, արեւմուտքում ընդգրկելով ամբողջութեամբ ողջ Ճորոխը, մինչեւ այնտեղ, ուր նրան է միանում հրասիսային (աջակողմեան) վտակ Աջարիս-Մղալին։ Ի վերջոյ սահմանն անցել է վերոյիշեալ երկու գետերի խառնարանից հարաւ գտնուող Պարիսարեան (այժմ Բուրիսալ-Դաշ) լեռներով, որոնք կազմում են Արեւելա-Թոնտական լեռների մի մասը, գտնուելով նրա ծայրը հրասիս-արեւելք-քում<sup>30</sup>։

\*

Սահմանն այն երեւոյթն է, որը ինչպէս հասարակութեան՝ ամբողջութեամբ վերցրած, այնպէս էլ առանձին անհատի մտածելակերպում չի ձեւաւորում կամ առաջանում տարերայնօրէն։ Սահմանի սկզբնաւորման ակունքների վերաբերեալ ուշագրաւ վկայութիւններ կան գերեւու Ք.-Ա.-Հ. Հազարամեակում գրուած մի շարք նշանաւոր գրական յուշարձաններում։ Արդէն այդ հին ժամանակներում իւրաքանչիւրը իւրովի էր պատկերացնում իր սահմանները, որն էլ ամրագրում էր իր մաահացեցակարգի մէջ։ Սրա լաւագոյն օրինակ կարող է մնել հին Միջագետքի առաջին բնակիների՝ շումէրացիների եւ աքաղացիների պատկերացումները սահմանի կապակցութեամբ։ Նրանք, իրենց միւսներից տարանջատում էին Եփրատ (Բուռանուն կամ Պուռատու) եւ Տիգրիս (Իդիգնա կամ Խդիգլատ) գետերով։ Այս պատճառով էլ, եթէ Գ. Հազարամեակում այստեղ իշխածներից ուրեմն մէկին յաջողուում էր նուաճել ողջ Միջազգետքը, ապա նա իրեն հոչակում էր որպէս «աշխարհի չորս կողմերի թագաւոր»։ Բայց ոչ բոլոր ժողովուրդներն էին, որ ունէին իրենց միւսներից տարանջատող Եփրատը եւ կամ Տիգրիսը։ Այս պատճառով էլ, ինչպէս իրաւացիօրէն նկատում է Հոմերոսի պէտմների գիտակներից մէկը՝ Ծուրի Անդրէկեր՝ «Աւելի յաճախ համայնքներն իւրաից անջատուած էին կամ ոչ-մեծ լեռնային հովտով, կամ էլ փոքրիկ կղզիներով, որոնք զտնում էին Եղեական կամ էլ Հոնիական ծովներում։ «Պետական սահմանը», որն անջատում էր մի համայնք-պետուրինը միահից, կարող էր մնել նաև ծովը, կամ էլ նօտակայ լեռնարումը, որը զերիշխող դիրք ուներ պղիսի եւ նրա շրջակայրի նկատմամբ»<sup>31</sup>։

Մեր կողմից կատարած այսպիսի մանրագնին վերլուծութիւնը պայմանաւորուած է վրաց պատմագրութեան մեջ տիրող նախկին եւ ներկայիս տարածքային յաւակնութիւնները կասեցնելու մտադրութեամբ։ Իսկ այդ յաւակնութիւններն աճում են երկրաշագական պղողքէսին համընթաց՝ օրէցօր ձեռք բերելով նոր երանգներ, որը գնալով նմանում է տարերային աղէտին։ Խօսքն յատկապէս վերաբերում է Ալեքսանդր Վրաստածի Պատմութեան բազմահատորեակի առաջին եւ երկրորդ հատորներում տեղ գտած տեսակէտերին, ուր իտուում է, թէ ինչպիսի տարածք, ինչ պատմա-

աշխարհագրական սահմաններ են զբաղեցրել վրացական պետութիւնները, ինչպէս մինչեւ Արտաշէս Ա.ը եւ նրանից յետոյ, այնպէս էլ նրա գահակալութեան տարիներին: Մասնաւորապէս վերոյիշեալ աշխատութեան երկրորդ հատորում Դ. Լ. Մուսիսիլիշվիլին գրում է: «Ըստ «Աշխարհացոյց»-ի Գուգարքն ընդգրկել է համարեա ողջ հարաւային Վրաստանը: Սակայն Ստրարոնն այն կանխորոշում է մի տարածք, որը տարածում է Կուրից հարաւ-արեւելք: Սա լիովին համընկնում է այն տեղադրութեանը, որը ներկայացնում է Մովսէս Խորենացին»<sup>32</sup>: Այստեղ կարելի է դնել անթիւ հարցական նշաններ, քանզի չկան նոյնիկ յուումներ յիշտատկուածի կապակցութեամբ: Իր յետագայ շարադրանքում խոստովանելով հանդերձ, որ ըստ Հին եւ միջնադարեան հայ մատենագիրների Գուգարքը հանդիսացել է Հայկական տարածք, եղել է նոյնիսկ բդեշխութիւն, այսինքն՝ աւելի առաջնակարգ դեր եւ դիրք է ունեցել, քան միևս նահանգները, այսուհանդերձ եղբակացնում է, որ Խորենացին, Փաւստոսը եւ ապա Յովհաննէս Դրասիսնակերտցին այն ներկայացնում են որպէս վրացական տարածք: Մուսիսիլիշվիլին յօրինում է մի նոր անյայտ ցեղի՝ Գուգարացիների կամ գուգարացիների գոյութեան առասպելը, իսկ Գուգարք անուան վերափոխուած կամ կերպարանափոխուած տարբերակ է Համարում Փամբակ (կամ էլ Բամբակի) անուանումը<sup>33</sup>: Եթէ այսպիսի հիմնաւորումներով առաջնորդուի իւրաքանչիւրը, ապա կը կարողանայ «սեփականնել» ոչ միայն իր անմիջական հարեւանի, այլև երկրագնդի ցանկացած ծայրամասում գտնուած իւրաքանչիւրի տարածքը՝ նմանութիւններ գտնելով իր բառապաշարի եւ միւսի որեւէ տեղանուան միջնեւ: Եւ վերջապէս, վերոյիշեալ մատենագիրների մօտ չկայ եւ ոչ մի վկայութիւն, որ գուգարացիների «ցեղը» ունեցել է վրացական ծագում եւ իսպան կապ չունի հայերի հետ:

Հայ-վրացական տարածքա-սահմանային խնդիրները նոյն ողով են քննարկուած նաեւ վերոյիշեալ աշխատութեան առաջին հատորում: Այստեղ նշում է, որ Արտաշէս Ա.ի կողմից հիւսիսային հայկական տարածքների՝ Խորձեանի, Գուգարքի եւ Պարիագրէսի յեռնալանջերի վերամիաւորումը հետեւանք էր «ուժային քաղաքականութեան», որի արդիւնքում էլ Քարթին կամ իրերիան զրկուել է իր օրինական տարածքներից: Այս ամէնի կենսագործման մէջ բնականարար, մեղագրում է Արտաշէս Ա.ը<sup>34</sup>: Վերեւում մենք արդէն տեսանք, որ Գուգարքի կապակցութեամբ նրանք յատկապէս վկայակոչում են Խորենացուն, որը այս մասին պարզ եւ յատակ նշում է: «Իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի, ժառանգեաց զիեառն Արին, որ է Կանգարը, եւ զիես մասինն Զաւախաց, զւոյր, զնոր, մինչեւ ցամորն Հնարակերտ: Բայց զտերութիւնն Աշոցայ, եւ զսեպիականորիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկացնոյ: Իսկ ընդդէս լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զիզօր ազգն, եւ նահապէտութեանն անուն կարդայ բդեաշխին Գուգարացոց, որ էր լաւ ի զաւակէ Միկրդատայ, Դարենի նախարարի, զոր ածեալ Աղերսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացոց ազգացն, զոր էած Նարուզորնատը, որպէս Արիւնենու պատմէ այսպէս ասելով.

«Անծագօրն Նարուգողնոսոր, որ ուժգնագոյն էր քան զհերակլէս, ի Լիբ-իացոց և ի Վերիացոց աշխարհն զօրաժողով լալ հասանէր եւ վանեալ վկանդեալ ընդ ձեռամբ նուաճէր, եւ զնամն մի ի նոցանէ յատաջակողմն Պոնտոս ծովու տարեալ թնակեցոցաներ: Եւ ի Վերիայն յեզր երկրի յարեամուս: Իսկ ի հովտին մեծի թասենոյ կարգէ նահապետորին զմրդումին անուանեալ, որ ի զաւակացն Հայկայ...»<sup>38</sup>: Այս ամէնին պէտք է յաւելի, որ Խորենացին Գուշարի մասին լիշտատկում է նշուածից զատ եւս երկու անգամ: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ դրանք ոչինչ չեն կարող տալ, բայց այս վկայութիւններն արժէւորում են այն առումով, որ նմանում են տոհմարանութեան կամ տոհմածառի: Դրանցում որպէս հայոց նախահայրերից մէկը հանդէս է գալիս Գուշարը, որի կողքին է Շարան, եւ Խորենացին տալիս է նաեւ, թէ ինչո՞վ էին նրանք զրադում, ինչպիսի՞ տարածք ունէին եւն: Իսկ այն գտնուելի է ծովեզերքի մօտ, ինչպէս չատ յաճախ կոչուելի է Սեւանայ լիճը, Մեծամօրի ակունքներից վերեւ ու հասել է մինչեւ Երասխ կամ Արաքս, որն էլ փաստորէն ի սկզբանէ սահմանագիծ էր հայերի եւ վրացիների միջեւ:

Իր յաջորդ վկայութիւնում Խորենացին Աշոցքի իշխանատունմը սերուած է համարում հենց Գուշարից, այսինքն՝ նրանց համարում է այս տեղանքի առաջինի զարմիկները: Խորենացու վկայութիւնների ուշագրաւութիւնը միայն այսքանով չէ, որ սահմանափակում է: Նա նաեւ համարեա ամբողջութեամբ մատնանշում է այն տարածքները, որոնք գտնուել են Գուգարք աշխարհի վարչական սահմաններում: «Անդրկենով իր մէջ ոչ թէ Զաւախըն ամբողջութեամբ, այլ նրա կես մասը, այսինքն՝ «Աշխարհացոյց»ի Վերին Զաւախը, Կանգարքը, Կողը, Ծորը, Ջորը և միս զաւառնը, մինչեւ Հնարակերտ ամրոց»<sup>39</sup>: Բոլորովին այլ հարց է, թէ որքան զաւառներ են եղել Գուգարքի կազմում: Աշխարհացոյցում հեղինակը նշում է 9ը, բայց, ինչպէս տեսանք վերեւում, Երեմեանը այդ թիւը հասցնում է 18ի, իսկ ապա՝ 15ի: Բ. Յարութիւնեանը քննութեան ննթարկելով այս կնճռոտ խնդիրը, յանգեն է հետեւեալ երկու եղրայանգումներին ա) Գուգարքը որպէս Մեծ Հայքի թագաւորութեան սովորական վարչատարածքային միաւոր, այսինքն՝ սորաատեղիք, միացուած է եղել Կողարքին, բ) Ք.-ա. Բ. դարում ձեւաւորուել է որպէս առանձին վարչատարածքային շրջան, յետագայում վերածուելով բդեշխութեան եւ սկզբնական շրջանում, հաւանարար Արտաշէս Ա-ի օրօք, բաղկացած է եղել 7 հետեւեալ զաւառներից՝ Զորովիոր, Կողրովիոր, Մորովիոր, Տաշիր, Թռեղդ, Կանգարք եւ Վերին Զաւախը: Թէ յետագայում ինչպիսի վարչատարածքային փոփոխութիւններ են տեղի ունեցել Գուգարքի ներսում, դա դուրս է մեր հետաքրքրութիւնների շրջանակներից, քանզի, ինչպէս նշեցինք վերեւում, այդ տրոհումներն տեղի են ունեցել աւելի ուշ շրջանում: Ի վերջոյ Երեմեանը զաւառների վերջնական թուաքանակ համարում է 15ը, որը մեր կարծիքով առաւել ճիշտ է եւ համապատասխանում է պատմական իրականութեանն ու սկզբնադրիւրների տեղեկութիւններին, իսկ Բ. Յարութիւնեանը՝ անջիմն կանգ է առնում 13ի վրայ<sup>38</sup>:

Այս Հարցի քննարկումն աւարտենաբ բուն վրացական ազբիւրների վկայութիւնների վերուժութեամբ, որը կ'ապացուցի, թէ որտեղ են սխալում Վրաստանի Պատմութիւնի հեղինակները ԺԱ. դարի վրաց պատմիչ Լէոնտի Մրովելին, որի մասին արդէն նշել ենք վերեւում, իր Վրաց Թագաւորների Ծև Նախահայրերի Ու Տումութիւնը արժէքաւոր աշխատութիւնում, մեծ տեղ է յատկացրել ինչպէս վրացահայկական յարաբերութիւններին, այնպէս էլ այս երկու երկրների միջեւ գոյութիւն ունեցած սահմանային խնդիրներին: Իր այս երկասիրութեան արդէն «Թորգումեանք» կոչուած գյուռմ նա գրում է. «Բայց Հայկը (Հայոս) ժառանգեց իր հօրը՝ Թորգումին (Թարգանոսին) պատկանող երկիրը, և տիրեց [սահմանակից] երկիրնեն] իրին. հիւսիսից՝ ինչպէս նատնանցել ենք, հարակից Որեր (sic) լուսամբ, արեւելքից՝ մինչեւ ծովն Գորգանի, արեւմուտքից՝ մինչեւ ծովն Պոնտոսի...»<sup>39</sup>: Այստեղ, եթէ կայ անորոշութիւն, ապա՝ միայն Հրւսիսի կապակցութեամբ, բայց թերթելով նրա տարրեր մասերն ու ծանօթանալով մատենագիրների վկայութիւններին, բազմիցս հանդիպում ենք միեւնոյն կարծիքին, որ Մեծ Հայքի եւ Վիրքի սահմանը մշտապէս անցել է կուրով, որն էլ մենք քայլ առ քայլ ապացուցեցինք մեր այս շարադրանքի ընթացքում<sup>40</sup>:

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Հայութիս Հիւրշման, Հին Հայոց Տեղայոց Անունները, Թարգ. Հայր Բ. Պիլեպիկնեան, Վեճննա, 1907, էջ 18, 20-22, 106-112, 115-118, 204. Նաեւ՝ Սոգէֆ Մարկուարտ, Հայ Թօնաշխաբ, Վեճննա, 1903, էջ 13 ևն.. Նաեւ՝ Հայք Դուկաս Խնճիքնեան, Մատրացութիւն Հին Հայաստաննայց. «Մեծ Հայք», Վենետիկ, 1822, էջ 317-375. Նաեւ՝ Հետոնդ Ալիշան, Հայաստանում. Պատմիք Յւ Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, թ. մասն. Պատմութիւնք Հայոց, էջ 32, 66, 132, 184, 223, 241 ևն.. Նաեւ՝ Նիկողայոս Աղոնց, Հայաստանը Ցոււանիքնանում Խարաշշանուու. Քաղաքական Կացութիւնը Հայ Նախարարական Կարգիի, Թարգ. Ա.Թ. Խոնդկարեան, էջ 18, Հայաստան Հրատ., 1987, էջ 36, 52, 252 ևն.. Նաեւ՝ Յակով Մանանդիան, Երկիր, Հարու, Թինական Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան. Ակադեմ. Մինչեւ Առաջունների Հայաստումը Հայաստանում (Յջմ. մ.թ.), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ. Հրատ., 1977, Հոդ. Բ. Ժ. 66-428/ԹՇ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1978. Նաեւ՝ Սուրէն Տ. Երեմեան, Հայաստանը Հայ «Աշխարհացոյց» ի (Փորձ VII Դարի Հայքական Թարտէզի Վերակազմութեան ժամանակակից Թարտէզագրական Հրմէի Հրատ.), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1963, էջ 40, 45, 48, 59, 65 ևն.. Նաեւ՝ Թագէու Յակոբեան, Հայաստանի Պատմական Աշխարհագրութիւն, Երեւան, Միութ Հրատ., 1968, էջ 57, 69, 72, 86, 90 ևն.. Նաեւ՝ R.H. Hewsen, "Introduction to Armenian Historical Geography II: The Boundaries of Achaemenid Armenia," *Revue des Études Arménienes*, T. XVII, Paris, 1983, էջ 134-137. Նոյնի՝ "Introduction to Armenian Historical Geography IV: The Boundaries of Artaxiad Armenia," *Revue des Études Arménienes*, t. XIX, Paris, 1985, էջ 64ևն.. Նոյնի՝ "Introduction to Armenian Historical Geography IV: The Vitaxates of Arsacid Armenia. A Reexamination of the Territorial Aspects of the Institution (part one)," *Revue des Études Arménienes*, t. XXI, Paris, 1989, էջ 271ևն.:

- <sup>2</sup> Մանրամասն տե՛ս՝ L. Մելիքսէթ-Բէկ, Վրաց Աշբուրները Հայաստանի Ծովածքի Մաս-ափն, Հար.-Ա. Շ.ԺԲ գար., Երևան, Մելքոնեան Ֆոնդ, ՀԽՍՀ Լուսողութեամատ Հրատ. 1934, էջ 158, 160, 162. նաև՝ Strabo, *The Geography of Strabo*, London, Oxford University Press, 1960, v. 6, XI, 14, 5. նաև՝ Մանանդեան, Երկիր, Հար.-Ա., էջ 135 ևն.. Այս պատերազմի ստոյթ թուականը անբար է, բայց գոնում են, որ տեղի է ունեցել Արտաշէսի գահակարութեան ակրանկան շրջանում (Նիկողայոս Աղոնց, Երկիր-Քենաչան Պատմութիւն Հայոց, Հար.-Դ., Երևան, Երևանի Գետական Համա-լարանի Հրատ., 2000, էջ 445-456).
- <sup>3</sup> Տե՛ս՝ Երեմեան, Հայաստանը Հատ, էջ 117: Հստ նրա արդ գաւառն զրադեցրել է 1620 կմ.<sup>2</sup> տարածք. նաև՝ Յակոբին, էջ 251. նաև՝ Բարկէ Յ. Յարութիւնեան, Հայաս-տանի Պատմութիւն Առյան, Ա. Մաս, Երևան, Մակմիլյան Արմենիա Հրատ., 2004, էջ 42-43. նաև՝ «Հայաստանը Հստ Աշխարհացոցը Քարտէզը» (թ. 3). նաև՝ R. H. Hewsen, *The Geography of Ananias of Sirak (Aškaracoyos). The Long and Short Recensions*, Wiesbaden, Publièré Avec Le Concours Հրատ., 1999, passim.
- <sup>4</sup> Ողիսմագ քրիմ մասին առաւել մանրամասն տե՛ս՝ Գագիկ Խ. Մարգսեան, Հելլենիստա-կան Թարաշը Հայաստանը Ծովաչս Խորենացին, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1966, էջ 139ևն..
- <sup>5</sup> Տե՛ս՝ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, թնն. բնագիրը Մ. Արեգեանի և. Ա. Յարութիւնեանի, լրաց. Ա. Բ. Մարգսեանի, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1991, Գ, խ.:
- <sup>6</sup> Տե՛ս՝ Փալտոսի Բուղանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ած Ք. Ժ. Ա. Պետեր-րուրդ, Կայսերական ԳԱ Հրատ., 1883, Գ.ժա, Դ.իդ:
- <sup>7</sup> Տե՛ս՝ Մարգսեան, էջ 142, 144, 152 և յատկապէս էջ 239:
- <sup>8</sup> Երեմեան, Հայաստանը Հստ, էջ 88:
- <sup>9</sup> Strabo, XI,XIV,4, տես նաև՝ II,1,14, XI,VIII,4.
- <sup>10</sup> Երեմեան, Հայաստանը Հստ քարտէզը:
- <sup>11</sup> Տե՛ս՝ N.V. Arutunian, *Toponimika Urartu (Ուրարտուի տեղանունների ցանկը)*, Երե-ւան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 76-77. նաև՝ R. H. Hewsen, "Introduction to Armenian Historical Geography", *Revue des Études Arméniennes, nouvelle série*, T. XIII, Paris 1978-1979, էջ 77-82.
- <sup>12</sup> Մանրամասն տե՛ս՝ Յարութիւնեան, Հայաստանի Պատմութիւն Առյան, էջ 14-15. նաև՝ Arutunian, *Toponimika*, էջ 13, 47, 49, 262-263.
- <sup>13</sup> Տե՛ս՝ Arutunian, *Toponimika աշխատութեան ներդիր քարտէզը Skhematischeeskaya Karta Urartu I Sopredelnikh Stran (Ուրարտուի և առևմանակից եկրների ուրուագծային քարտէզ)*. նաև՝ Կորպս Urtartskikh Klinoobraznich Nadpisey (Ուրարտական սեպագիր արձանագրութիւնների ժողովածու) աշխատութեան "Biyayimili-Urartu" Skhematischeeskaya Karta (Բիայմիլի-Ուրարտու ուրուագծային քարտէզ) ներդիր քարտէզը, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2001.
- <sup>14</sup> Տե՛ս՝ Հայաստանը Հստի ներդիր քարտէզը և Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հար.-Ա. Ի. ներդիր քարտէզը, Երևան, Հայկ. ԽՍՀ ԳԱ Հրատ., 1984. նաև՝ R. H. Hewsen, "Introduction to Armenian Historical Geography II: The Boundaries of Achaemenid Armenia", *Revue des Études Arméniennes, nouvelle série*, T. XVI, Paris, 1983, էջ 129-137. նոյնի՝ "Introduction to Armenian Historical Geography III: The Boundaries of Orontid Armenia", *Revue des Études Arméniennes, nouvelle série*, T. XVIII, Paris, 1984, էջ 353-357.
- <sup>15</sup> Փալտոսի, Ե.Ժե:
- <sup>16</sup> Տե՛ս՝ Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հար.-Ա. Ի. ներդիր քարտէզը՝ «Մեծ Հայքը Ըստ Աշխարհացոյց»ի:

- <sup>17</sup> Տե՛ս՝ Յ. Մանանդյան, “Srednevrokovie Itinerarii V Armianskoi Rukopisi X Stoletia” (*Միջնադարի համարութիւնը Ժ. դարի Հայ ձեռագիր մատենակներում*), Օրգեր, Հայր. Ծ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 72. նաև նոյնի՝ “O Torgovle i Gorodakh Armenii V Svyazi S Mirovoy Torgovlei Drevnikh Vremen” (Հին ժամանակների առեւտրի հետ կապուած Հայաստանի առեւտրի և քաղաքների մասին), Օրգեր, Հայր. Ծ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 182. նաև Բ. Յարութիւնեան, Հայաստանի Պատմութեան Աշխատ., էջ 40-41.
- <sup>18</sup> Երեմեան, Հայաստանը, էջ 63. նաև՝ էջ 55.
- <sup>19</sup> Մելիքսէթ-Բէկ, էջ 166-167.
- <sup>20</sup> Ocherki Istorii Gruzii, T. II, Gruzia V. IV-X Vekakh, (Վրաստանի պատմութեան ուրուսագեր, Հայր. 2, Վրաստանը IV-X դարերում), խմբ. Մ. Լորդկիսանինձէ, Դ. Մուսիբիչվիլի, Թրիլիսի, Մեցնիերերա Հրատ., 1988, էջ 382 և ս.:
- <sup>21</sup> Տե՛ս՝ Ocherki Istorii Gruzii, T. I, Gruzia S Drevneishikh Vremen Do IV V. N.E. (Վրաստանի պատմութեան ուրուսագեր, Հայր. 1, Վրաստանը Հին ժամանակաշրջանից մինչև Ք. թ. դարը), խմբ. Գ. Մելիքչվիլի և Օ. Լորդկիսանինձէ, Թրիլիսի, Մեցնիերերա Հրատ., 1989, էջ 382; Համեմատութեան Համար տե՛ս՝ Hewsen, “Introduction to Armenian Historical Geography IV”, էջ 58-60.
- <sup>22</sup> Մահրաման անմանության՝ էջ 382. նաև՝ Istorija Gruzii, T. I. S Drevneishikh Vremen Do 60-kh Godov XIX Veka (Վրաստանի պատմութիւն, Հայր. 1, Հին ժամանակներից մինչև Ք. թ. դարի 60-ականները), խմբ. Ն. Ա. Բեձնելչվիլի և Վ. Գ. Դոնդուա, Թրիլիսի, 1962, աշխատութեան ներդիր բարտէզը:
- <sup>23</sup> Խորենացի, Բ., ը.՝
- <sup>24</sup> Բ. Յարութիւնեանը գտնուու է, որ Մինչիքի ձեւաւորումը որպէս Խաչանդ վերջնականացէ տեղի է ունեցել Տրդատ Ա. թ օրոք, խակ Աշխարհացոյցքան սահմանները ձեւաւորուել են, Հաւանարար Գ. դարում (Բ. Յ. Յարութիւնեան, «Մեծ Հայքի Մինիք Աշխարհն Էստ «Աշխարհացոյցքի» (Պատմա-Աշխարհագրական Դիտարկումներ)», Պատմաբանագրական Հանգչա, 2003, №1, էջ 138-141).
- <sup>25</sup> Տե՛ս՝ Մովսէս Կողանեկառուացյալ Պատմութիւն Աշուանից Աշխարհի, Թիֆլիս, Աշխանի տպարան, 1912, Ա. դ. գ. թ. ժ.:
- <sup>26</sup> Strabo, XI,XIV,4:
- <sup>27</sup> Տե՛ս՝ Երեմեան, Հայաստանը, էջ 118. նաև՝ Անանիս Շիրակացի, Մատենացրութիւն, թարգ. Ա. Գ. Արքահամեանի և Գ. Բ. Պետրոսիսի, Երևան, Սովորական Գրու, 1979, էջ 297. նաև՝ K. P. Patkanov, Armyanskaya Geografiya VII Veka Po R.Kh. (կ. դարի Հայկական աշխարհագրութիւն, ըստ Բ. Ա. Բ. (Pripisivashayasya Moyseyu Khorenskomu) (Մովսէս Խորենացուն վերագրուած) Tekst I Perevod (բնագիր և թարգ.), Սանկտ Պետերբուրգ, Կայսերական ԳԱ Հրատ., 1877, էջ 52:
- <sup>28</sup> Plinii Secundii Naturalis Historiae, Cambridge-Mass.-London, Oxford University Press, 1957, v. 2, VI,XI, 29. նաև՝ Ա.Ա. Ուկանեան, Հայկական Հեռնացիուրշ Ծ. Հայրիան Շրբանձեցր բարտէզը, Երևան, Երեանի Պետական Համալսարանի Հրատ., 1976:
- <sup>29</sup> Ptolemaios Handbuch der Geographie, Griechisch-Deutsch, 2 teil, buch 5-8, Basel Schwabe Verlag, 2006, VI,XI,29. նաև՝ R.H. Hewsen, “Ptolemy's Chapter on Armenia: An Investigation of his Toponyms,” Revue des Études Arméniennes, nouvelle série, T. XVI, Paris, 1982, էջ 114-115, 117. նաև նոյնի՝ “Introduction to Armenian Historical Geography IV,” էջ 271-273.
- <sup>30</sup> Տե՛ս՝ Երեմեան, Հայաստանի բարտէզը. նաև՝ Անկանեան, Հայկական Հեռնացիուրշ ըստ բարտէզը:
- <sup>31</sup> Istorya Drevnego Mira Kn. I. Rannaya Drevnost, Otv. Red. I. M. Dyakonov (Հին աշխարհի պատմութիւն, գրք. I, վաղ Հնութեան շրջան, պատ. Խմբագիր. Ի. Դիակոնով),

- <sup>1</sup>Մոսկուա, Արեւելեան Գրականութեան Գլխաւոր Խմբ. Հրատ., 1989, էջ 340, Izd. Trete (երրորդ հրատարակութիւն). Նաև՝ *Istoria Drevnei Gretsii*, pod. Red. V.I. Kuzishina (Հին Յունաստանի պատմութիւն, խմբ.՝ Վ. Կուզինչինա), Մոսկուա, Վլաշայա Շկոլա Հրատ., 2001, էջ 80-83. Նաև՝ Հ. Ժ. Յարութիւնեան, «Մահման Հասկացութիւնը Եւ Մրա Բազմապատմական Նշանակութիւնը», *Հայքական Բանագիր*, 2005, N 1, էջ 106-114. Նաև՝ Նոյնի՝ «Մահմանը Մովսէս Խորենացու Պատմահայեցողութեան Մէջ», *Պատմութիւն Եւ Կրթութիւն Գիտաւուս. Մեթոդ. Հանդիս. Երեւան* 2005, N 1-2, էջ 69-78. Նաև՝ Նոյնի՝ «Ponyati Granitsi V Drevnem Mire (Vostok, Gretsi I Rim)» (Մահմանների Հասկացութիւնը Հին աշխարհում - Արեւելք. Յունաստան և Հռոմ), *Իրան-Համականք*, Հար. 40, Երեւան 2005, էջ 67-71.
- <sup>2</sup> Ocherki, T. II, էջ 389.
- <sup>3</sup> Տե՛ս Նոյն՝ էջ 389-390. Այս տեսակէտները հերքուել են նաև Դէյփիդ Լենգի կողմից (D. Lang, *Gruzinei. Khraniteli Svyatini* (Վրացիներ. սրբավայրեր պահպանողներ), Մոսկուա, Յննտրպոլիտարաք Հրատ., 2004, էջ 64 ևն.); Հարկ է նշել, որ հեղինակը ոչ միայն իրաւացիորէն քննարկել է խնդիրը, այլև իր հիմնական եղայանգումներն է կատարում առաջին հերթին յենուելով հնագիտական պեղումների արդիւնքների վրայ:
- <sup>4</sup> Տե՛ս՝ Ocherki, T. I, էջ 272-273.
- <sup>5</sup> Խորենացի, Բ.Ը:
- <sup>6</sup> Նոյն, Բ.Պ.Հ.Բ.
- <sup>7</sup> Բ. Յ. Յարութիւնեան, «Մեծ Հայքի Գուգարք Աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի», *Բաներեր Երեւանի Համալսարանի*, 1977, N2, էջ 177.
- <sup>8</sup> Տե՛ս՝ Երեմեան, Հայաստանը, էջ 119. Նաև՝ Բ. Յարութիւնեան, Հայաստանի Պատմութեան Ատլաս, էջ 42-43. Նաև՝ Բ. Յարութիւնեան, «Մեծ Հայք», էջ 194 ևն.:
- <sup>9</sup> Մելքոնէթ-Բէկ, էջ 145:
- <sup>10</sup> Տե՛ս՝ Նոյն աշխատութեան բազմաթիւ մասերում:

THE NORTHERN BORDERS OF THE KINGDOM OF GREATER ARMENIA  
ACCORDING TO ARMENIAN, GEORGIAN, GREEK AND ROMAN HISTORIANS  
(190BC-428AD)  
(HISTORICAL-GEOGRAPHICAL STUDY)  
(Summary)

A. J. HARUTYUNYAN

The question of the northern borders of the kingdom of Greater Armenia was written about not only by ancient Armenian historians, but also by old Georgian, Greek and Roman authors. These northern boundaries were finally established by Artashes I and remained unchanged until the fall of the Arshakid Kingdom in 428 AD.

Georgian researchers, however, both during and after the Soviet period, have been in disagreement with Armenian historiographers regarding the border line. They have presented counter-arguments for redrawing certain sections of the borderline and consider certain northern regions of historical Armenia as parts of Georgia.

The author refutes the Georgian point of view. Referring to a number of ancient Armenian, Georgian, Greek and Roman historians, he examines the validity of the Georgian position and argues that it is not based on sound data. In addition, he notes that the evidence Georgian historians bring forth does not underpin their views as they distort and misinterpret their historical references.

